— Երբեմն, ամառային արձակուրդների ժամանակ, գիւղացիները ինձ թոյլ են տալիս գնալ՝ ազգականներիս տեսնելու: Տարոայ մէջ երեք ամիս բոլորովին ազատ եմ ես: Մանաւանդ, որ ուսումը այստեղ գլխաւորապէս ձմեռն է լինում, որովհետեւ տարոայ միւս եղանակներում երեխաները օգնում են իրանց ծնողներին նրանց տնտեսական աշխատութիւնների մէջ: Այդ ես թոյլ եմ տալիս գլխաւորապէս այն նպատակով, որ իմ աշակերտները գործնականապէս վարժուեն երկրագործական մշակութիւների մէջ:

— Ձեր բացակայութեան ժամանակ ո՞ւմն էք յանձնում ձեր պաշտօնը:

— Ես մի օգնական եւս ունեմ, որը իմ հասցրած աշակերտներիցն է:

Գիշերից բաւական անցել էր: Ժամանակ էր հիւրերին հեռանալ: Գիւղացին զարթնում է արեւից առաջ, հանգստանում է արեւի հետ: Նա սովոր չէ անքնութեան մէջ վատնել գիշերային հանգստութիւնը:

Թէեւ ռեսի ճոխ եւ ընդարձակ տունը՝ թոով մեզանից մի քանի անգամ աւելի հիւրերի համար՝ թէ՛ քնելու տեղ եւ թէ՛ մաքուր անկողիններ ունէր, բայց, շինական սովորութեան համեմատ, մեզ հետ սեղանակից եղող գիւղացիները պէտք է մեզ իրանց մէջ բաժանէին, որպէսզի տան տիրոջ համար ծանրութիւն չլինէր: Բաւական երկար տեւեց վիճաբանութիւնը մեր ընտրութեան մասին. իւրաքանչիւրը ցանկանում էր իր տունը տանել մեզանից ամէն մէկին, թէեւ մեր թիւը այնքան փոքր էր, որ ամէնքին բաւականութիւն չէր կարող տալ: Մտածում էին վիճակ ձգել: Այդ միջոցին վարժապետը մէջ մտաւ, ասելով.

— Բարեկամներ, մեր բախտից մեր հիւրերը այնքան փոքր են թոով, որ ամէնքիս բաժին չի հասնի. պարոն բժշկապետին ես կոէր առնեմ, իսկ միւսներին թող տէր հայրը բաժանէ, ինչպէս որ կը կամենայ:

Մենք թոով չորս հոգի էինք՝ ես, Ասլանը, Մուրադը եւ Ջալլադը: Ամէնքը համաձայնուեցան, որ Ասլանին, այսինքն պարոն բժշկապետին, վարժապետը տանէ իր մօտ, որովհետեւ նրա լեզուն իմանում է, բացի դրանից, եւրոպական ձեւով կահաւորուած սենեակ ունի: Ինձ վեր առեց տէր հայրը, Մուրադը մնաց ռեսի տանը, իսկ Ջալլադին տարաւ մի այլ գիւղացի, որը տեղային եկեղեցու երեսփոխանն էր:

## ԻԵ. ԳԻՒՂԱԿԱՆ ՎԱՐԺԱՊԵՏԸ

Երբ գիւղացին հարեւանի մօտ հիւր է կանչուած, եւ նրա տանեցիք գիտեն, որ այնտեղ օտար տեղից եկած հիւրեր կան, իրանք եւս պատրաստու-